ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Աղքատության վիճակագրության վերաբերյալ

Գործողություն 4.5. Ձեռքբերումների կատարման դիտարկում և առաջարկություններ ապագայի համար

Առաքելությունն իրականացվել է

Դանիայի վիճակագրությունից պրն Յարլ Քուիտզաուի
Ֆինլանդիայի վիճակագրությունից պրն Վելի Մաթի Տյորմելետոյի կողմից

2017թ. հունիսի 13-16-ը

Վերջնական տարբերակ

Հայաստանի
Հանրապետության ազգային
վիճակագրական
ծառայություն

Statistics Finland

STATISTICS
DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տվյալներ</u>
Յարլ Քուիտզաու
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
2100 Դանիա
Կոպենհագեն
Հեռ. +4539173594
Էլ-փոստ. JAQ@dst.dk

Վելի Մաթի Տյորմելետո
Ֆինալնդիայի վիճակագրություն
Տյոպայանկատու 13
00022 Ֆինլանդիայի վիճակագրություն
Հելսինկի, Ֆինլանդիա
Հեռ. +358295513651
Էլ-փոստ. veli-matti.tormalehto@stat.fi

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Կարգավիճակը ծրագրի սկզբում 4
3. Ծրագրի արդյունքների կարգավիճակը 5
4. Ձեռքբերումների կայունություն 7
5. Առաջարկություններ ապագայի համար (կաճաժամկետ և երկարաժամկետ) 8
6. Լրացուցիչ աջակցության կարիքների նույնականացում 10
7. Չլուծված հարցեր 10
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 11
Հավելված 2. Առաքելության ծրագիրը 13
Հավելված 3. Անձինք, ում փորձագետները հանդիպել են 14

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ-ԵԿՊՎ	Եկամուտների և կենսապայմանների վիճակագրություն (Եվրոստատ)
ՆՁ	Նյութական զրկվածություն
AROPE	Աղքատության և սոցիալական բացառման ռիսկի ներքո
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Առաքելության վերաբերյալ սույն հաշվետվությունը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում - II փուլ» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա վերջին առաքելությունն էր 4-րդ բաղադրիչի շրջանակներում:

Առաքելության նպատակն էր.

- Քննարկել ծրագրի սկզբում բաղադրիչի կարգավիճակը
- Քննարկել ծրագրի արդյունքների կարգավիճակը
- Պատրաստել առաջարկություններ ձեռքբերումների կայունության վերբերյալ
- Պատրաստել առաջարկություններ ՀՀ ԱՎԾ ապագա աշխատանքի համար ծրագրի ավարտից հետո
- Նույնականացնել չլուծված հարցերը և կարիքները հետագա աջակցության համար, եթե այդպիսիք լինեն

ԱԵ փորձագետները ցանկանում են իրենց անկեղծ շնորհակալությունն արտահայտել իրենց հետ հանդիպած բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին՝ բարի և արհեստավարժ աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որն ստացել են Հայաստանում իրենց գտնվելու ընթացքում, և ինչը մեծապես հեշտացրել է նրանց աշխատանքը:
Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են փորձագետներին և կարող են չհամընկնել ԵՄ, ՀՀ ԱՎԾ, Ֆինլանդիայի վիճակագրության կամ Դանիայի վիճակագրության տեսակետների հետ:

2. Կարգավիճակը ծրագրի սկզբում

Աղքատության և սոցիալական բացառումների վիճակագրության համար տվյալների աղբյուրն է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունը (ՏՏԿԱՀ): Այն ունի շատ ընդարձակ բովանդակություն և ընդգրկում է սպառումը, եկամուտը, կենսապայմանները, ինչպես նաև սոցիալական բացառումների ասպեկտները: Տվյալները հավաքագրվում են թղթային հարցաթերթերի միջոցով: Տարվա յուրաքանչյուր ամսվա ընթացքում հարցվում է ավելի քան 400 տնային տնտեսություն:

ՏՏԿԱՀ հիման վրա արտադրվել է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցը, որի որակը գնահատվում է բարձր: Հաշվետվությունն ընդգրկել է բաժիններ սոցիալական բացառումների վերաբերյալ, մասնավորապես՝ նյութական և կենսապայմանների հետ կապված զրկվածության և երեխաների զրկվածության մասին:

Չնայած հայկական ՏՏԿԱՀ աղքատության վերաբերյալ տվյալների հավաքագրման և հաշետվության կազմման ստանդարտները բարձր էին, համաձայն 2015թ. սեպտեմբերին իրականացված առաջին առաքելության բացահայտումների, սակայն հետագա բարելավման համար նույնականացվեցին երկու հիմնական նպատակներ: Առաջին, ուղղել աղքատության վիճակագրության միտումները դեպի միջազգային և մասնավորապես եվրոպական ստանդարտներ: Երկրորդ, բարելավել երեխաների աղքատության և սոցիալական բացառումների մշտադիտարկումը:

Հետագա բարելավումների համար որպես մտահոգություն և սահմանափակում էր դիտվում ՏՏԿԱՀ-ում ռեսպոնդնետների բարձր բեռը: Ընթացիկ հարցաթերթը երկար է և ընդգրկում է շատ տարբեր ոլորտներ: Ընթացիկ ՏՏԿԱՀ հարցաթերթին հետագայում նոր հարցեր ավելացնելու շրջանակը բավականաչափ սահմանափակ է: Իսկ վարչական տվյալների օգտագործումը որպես կարճաժամկետ իրագործելի այլընտրանք չդիտարկվեց:

Փորձնական հետազոտության բովանդակության վերաբերյալ քննարկումների մեկնարկային կետը հանդիսացավ ԵՄAROPE ցուցանիշը (աղքատության և սոցիալական բացառման ռիսկի ներքո): Այն ունի երեք բաղադրիչ. աղքատություն, սուր նյութական զրկվածություն, և աշխատանքի ցածր ինտենսիվություն:

ԵՄ աղքատության սահմանումը եկամտի վրա հիմնված հարաբերական չափում է: Հայկական աղքատության շեմը հիմնված է սպառման տվյալների վրա, քանի որ դրանք ավելի լավ որակի են, քան եկամտի վերաբերյալ տվյալները և ավելի լավ են արտացոլում տնային տնտեսությունների տնտեսական բարեկեցությունը: Ի հակադրություն եկամտի հիման վրա չափված աղքատության և ցածր աշխատանքային ինտեսնիվության բաղադրիչների, ԵՄ ԵԿՊՎ-ին մոտարկումը իրագործելի է թվում նյութական զրկվածության ոլորտում, այդ թվում նաև հաշվի առնելով սուբյեկտիվ տնտեսական բարեկեցության մասին հարցը: Ուստի առաջարկվեց կենտրոնանալ միայն այս հարցերի վրա և փորձնական հետազոտության մեջ դիտարկել միայն դրանք:

3. Ծրագրի արդյունքների կարգավիճակը

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2015թ. առաջին առաքելությանը գնահատվեց Հայաստանում աղքատության և զրկվածության վիճակագրության ընթացիկ իրավիճակը, և մշակվեց փորձնական հետազոտության հարցաթերթը:

Փորձնական հետազոտության բովանդակությունը կառուցվեց զրկվածության վերաբերյալ ԵՄ ԵԿՊՎ թիրախ փոփոխականների և այլ համապատասխան փոփոխականների հիման վրա: Նպատակն էր միտումներն ուղղել դեպի ԵՄ ԵԿՊՎ՝ առանց վնասելու ներկայիս հայկական ՏՏԿԱՀ-ի բովանդակությունը: Կոնկրետ նպատակ դրվեց հետևյալը. կարողանալ հաշվարկել սուր նյութական

զրկվածության ցուցանիշը հայկական ԿԱՀ տվյալներից՝ համաձայն Եվրոպական միության ստանդարտների:

2015թ. նոյեմբերին ՀՀ ԱՎԾ-ն իրականացրեց փորձնական հետազոտություն 48 տնային տնտեսությունների շրջանում: Փորձնական հետազոտությունը հավաքագրեց տվյալներ վեց բաժինների և 26 փոփոխականների համար նյութական զրկվածության վերաբերյալ և՛ տնային տնտեսությունների և՛ անհատական մակարդակով, ինչպես նաև հավաքագրեց տվյալներ երեխաներին առնչվող հարցերի համար:

Փորձնական հետազոտությունից ստացված արդյունքները վերլուծվեցին երկրորդ առաքելության ժամանակ 2015թ. վերջում: Ընդհանուր առմամբ փորձնական տվյալների որակը լավն էր և արդյուքերն էլ խրախուսող: Փորձնական արդյունքների համադրումը ԵՄ ցածր եկամուտ ունեցող երկրների հետ մատնանշում էր, որ Հայաստանի արդյունքներն արժանահավատ են: Որոշ փոփոխականների համար փորձնական հետազոտությունը ցույց տվեց Հայաստանում բարձր զրկվածության աստիճան:

Փորձնական հետազոտության տվյալների համապատասխանության և արժանահավատության շնորհիվ վերլուծության եզրակացությունն էր հարցերը պահել նույն ձևաչափով, ինչ որ փորձանական հետազոտությունում էր: Վերանայվեցին և պարզաբանվեցին որոշ թարգմանություններ: Հիմնական ՏՏԿԱՀ հարցաթերթի նոր հարցերի փոխարինման հետ կապված հարցաթերթի կառուցվածքը քննարկվել և հաստատվել է ՀՀ ԱՎԾ կողմից:

2016թ. ՏՏԿԱՀ տվյալների հավաքագրումը

ԵՄ նյութական զրկվածության տարրերը հաջողությամբ հավաքագրվեցին 2016թ. ՏՏԿԱՀ-ով մի քանի լրացուցիչ ազգային տարրերի հետ մեկտեղ, ներառյալ երեխաների զրկվածության մոդուլը: 2016թ. արդյունքները վերլուծվեցին երրորդ առաքելության ընթացքում 2017թ. ապրիլին:

Ընդհանուր առմամբ կարծիքն այն էր, որ տվյալները ամբողջական և տեխնիկապես բարձր որակի են: Համաձայն նախնական վերլուծության զրկվածության արդյունքները համահունչ են ներածական տեղեկատվությանը, ինչպիսին տնային տնտեսությունների ծայրը ծայրին հասցնելու կարողության վերաբերյալ տեղեկությունն էր: Ինչպես փորձնական հետազոտության մեջ, վերլուծությունը ևս ցույց տվեց զրկվածության բարձր մակարդակ Հայաստանում եվրոպական երկրների հետ համեմատած:

Ընդհանուր եզրկացաությունն այն է, որ տվյալների հավաքագրումը հաջողությամբ իրականացվել է, և որ հավաքագրված տվյալներն ապահովել են անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային համադրումեր կատարելու համար և՛ ընթացիկ և՛ ԵՄ ԵԿՊՎ նյութական զրկվածության վերանայված ցուցանիշների հետ: Հետագա աշխատանքի համար առաջարկությունն էր ստուգել տվյալների

վավերականությունը և նյութական զրկվածության տարրերի ներքին փոխկապակցվածությունը՝ նախքան տվյալների հրապարակումը, օրինակ արդյունքները խաչաձև հաշվարկելով սպառման և եկամտի տվյալների և գոյություն ունեցող աղքատության ցուցանիշների հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների հմտությունների բարելավումը վերլուծության և տարածման համար

Համապատասխան աղյուսակների կառուցումը և՛ վերլուծության և՛ տարածման համար պահանջում է շատ աշխատանք և տեխնիկական հմտություններ: Տնային տնտեսությունների բաժինը ներկայում հիմնականում հիմնվում է տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության մեկ, գուցե 2 աշխատակիցների վրա՝ համապատասխան աղյուսակներ արտադրելու համար: Սա ունի գործընթացները խիստ ուշացնելու ներուժ՝ բացակայության կամ այլ անսպասելի խնդիրների դեպքում:

Որպես այս հարցը լուծելու առաջին քայլ՝ փորձագետների կողմից տվյալների վերլուծության մեջ օգտագործվող SAS ծրագրերը կոնվերտացվեցին SPSS կոդի ՀՀ ԱՎԾ SS մասնագետի հետ միասին 2017թ. ապրիլին կայացած առաքելության ընթացքում: Սա հնարավորություն տվեց ՀՀ ԱՎԾ-ին ինքնուրույն վերլուծություններ անել՝ օգտվելով SPSS-ից, համաձայն զրկվածության ցուցանիշների ներկայիս ԵՄ մասնագրերի, ներառյալ որոշ առավել տեխնիկական ասպեկտներ, ինչպիսին է երեխաների զրկվածության անձնական տարրերի իմպուտացիան:

Որպես վերջին առաքելության մաս՝ փորձագետները նախաձեռնեցին վերապատրաստում վիճակագրական ծրագրավորման գծով տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի հիմնական աշխատողների և տեղեկատվական տեխնոլոգիների նոր մասնագետի համար: Սրա նպատակն էր հնարավորություն ընձեռել տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին ինքնուրույն արտադրել աղյուսակներ և նվազեցնել կախվածությունը SS վարչությունից:

4. Ձեռքբերումների կայունություն

Ռիսկեր, որոնք կարող են վտանգել կայունությունը

Ներկայում ԵՄ նյութական զրկվածության ցուցանիշները վերանայման գործընթացում են: Թեև նյութական զրկվածության նոր ցուցանիշների համար տարրերի խումբը հայտնի է և հավաքագրվում է, սակայն Եվրոստատը դեռևս վերջնական որոշում չի կայացրել նյութական զրկվածության Եվրոստատի նոր ցուցանիշի շեմերի վերաբերյալ: Սա հանգեցնում է նրան, որ համադրելիությունը պահպանելու համար ՀՀ ԱՎԾ-ն առաջիկա տարիներին պետք է արդիականացնի իր մոտեցումները՝ համաձայն Եվրոստատի մեթոդաբանության:

Տնային տնտեսությունների բաժինը աղյուսակներ ստանալու համար կախյալ վիճակում է գտնվել տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության մեկ հիմնական աշխատողից: Այսպիով տեղեկատվական տեխնոլոգիաների իրավիճակն ունի աշխատանքները խցանելու ներուժ: Սա կարող է հանգեցնել պոտենցիալ և ոչ անհրաժեշտ հապաղումների՝ հրապարակումների համար աղյուսակների արտադրման հարցում և պետք է մեղմացվի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի հիմնական աշխատողներին վիճակագրական ծրագրավորման գծով վերապատրաստելու միջոցով:

Ընդարձակ սոցիալական հետազոտությունը թանկ արժե: Որպես այդպիսին ֆինանսավորման պակասը կարող է ենթադրել ռիսկեր կայունության համար ապագայում:

5. Առաջարկություններ ապագայի համար (կաճաժամկետ և երկարաժամկետ)

Տվյալների վավերականացում և տարածում

ՀՀ ԱՎԾ-ն հավաքագրել է անհրաժեշտ տվյալներ և պետք է հրապարակի արդյունքները, երբ հաստատվի արդյունքների վավերականությունը: Նյութական զրկվածության անհատական տարրերը, ինչպես նաև կազմված ցուցանիշները պետք է խաչաձև ստուգվեն տնային տնետսությունների սպառման և եկամտի մակարդակների հետ:
Ցուցանիշները և հարցերը ձևակերպվել են եվրոպական կոնտեքստում: Հարցերը Հայաստանի համար չեն հարմարեցվել: Արդյունքում որոշ հարցեր, ինչպիսին է ամբողջ տնային տնտեսությունով արձակուդի գնալու կարողության մասին հարցը, ցույց է տալիս զրկվածության հարաբերական բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է բազմասերունդ տնային տնտեսություններով, որոնք բնորոշ են Հայաստանին: Նմանատիպ տեղական հատկանիշները պետք է բացատրվեն արդյունքները տարածելու ժամանակ: Կարելի է միջազգային համադրումներ կատարել՝ օգտվելով եվրոպական արդյունքներից, որոնք կարելի է գտնել Եվրոստատի տվյալների բազայում:
Առաջարկվում է սեպտեմբերի համար պատրաստվող «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման մեջ ունենալ բաժին եվրոպական նյութական զրկվածությաան ցուցանիշների վերաբերյալ: Հաջորդ քայլը կլինի որոշ արդյունքների տարածումը Ստատբանկում մինչ տարեվերջը:

Արդիականացնել հայկական մեթոդաբանությունը՝ հետևելով Եվրոստատի մեթոդաբանությունում կատարվող փոփոխություններին

ՀՀ ԱՎԾ-ն հաջողությամբ հավաքագրել է անհրաժեշտ տվյալներ զրկվածության տարրերի վերաբերյալ՝ հաշվարկելու համար Եվրոստատի նյութական զրկվածության ցուցանիշները: Որպես առաքելության մաս փորձագետներն աջակցել են ՀՀ ԱՎԾ տնտային տնեսությունների հետազոտությունների բաժնին՝

SPSS-ում կոդ մշակելու հարցում, որը հնարավորություն է տալիս բաժնին հաշվարկել տարբեր շեմերով նյութական զրկվածության տարրերը:
9 տարրից կազմված հին ցուցանիշի համար նյութական զրկվածության շեմը 9-ից 3-ի առկայությունն է, իսկ սուր նյութական զրկվածության շեմը 9-ից առնվազն 4-ի առկայությունն է: Սակայն Եվրոստատը դեռևս որոշում չի կայացրել 13 տարրից բաղկացած նյութական զրկվածության ցուցանիշների կամ երեխաների զրկվածության ցուցանիշի կոնկրետ շեմի վերաբերյալ: ՀՀ ԱՎԾ-ին խրախուսում ենք մշտապես հետևել Եվրոստատի մեթոդաբանությանը և իրականացնել համապատասխան արդիականացում՝ ստուգելով ԵՄ ԵԿՊՎ կայքը կամ կապվելով փորձագետների կամ Եվրոստատի պաշտոնատար անձանց հետ էլ-փոստով:

Պահպանել կամ արդիականացնել ազգային ցուցանիշը
Նյութական զրկվածության Եվրոստատի ցուցանիշները նախատեսված են Եվրոպական կոնտեքստում: Հայաստանում ցուցանիշների հիմնական նպատակն է ապահովել զրկվածության վիճակագրություն, որը միջազգայնորեն համադրելի է:

Առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն պահպանի զրկվածության ցուցանիշները, որոնք առավել լավ են արտացոլում հայկական բնակչության կարիքները և նախասիրությունները, միաժամանակ երաշխավորելով, որ ՏՏԿԱՀ-ը կարող է օգտագործվել՝ կառուցելու ԵՄ ստանդարտներին համահունչ ցուցանիշներ:

ԵՄ ցուցանիշի նպատակն է լրացնել ազգային ցուցանիշները զրկվածության մասին:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և տվյալների մշակման աշխատանքի նոր հոսք
Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կախյալ վիճակը տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության հիմնական աշխատակիցներից նույնականացվել է որպես նյութական զրկվածության արտադրման առաջնային խցանում: Սա մեղմելու համար առաջարկվում է, որպեսզի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժինը զարգացնի կարողություն արտադրելու իրենց սեփական աղյուսակները հրապարակումների համար:

Առաջարկվում է որպեսզի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժինը միշտ հավաստիանա, որ հավաքագրվող տվյալները միշտ փոխանցվում են տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի համակարգիչներ, տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության կողմից տվյալների բազան ստեղծելուց անմիջապես հետո: Սրա նպատակն է կարողանալ արտադրել սեփական աղյուսակներ տարածման համար, ինչպես նաև վերապատրաստել սեփական աշխատակիցներին վիճակագրական ծրագրավորման գծով՝ օգտագործելով իրական տվյալներ: Անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար առաջարկվում է, որպեսզի հիմնական աշխատողներն անցկացնեն օրական առնվազն 30 րոպե՝ ուսուցման գործընթացում ծրագրավորման հմտությունների գծով վարժություններ անելու վրա:

Այսպիսով տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության դերը պետք է լինի նախապատրաստել տվյալների բազան և կատարել տվյալների մաքրումը և դրանց միացումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը պետք է աջակցող դեր ունենա աշխատողների վերապատրաստման համար և ընթացքում որևէ տեխնիկական դժվարություններ ծագելու դեպքում:

Դիտարկել վարչական ռեգիստրների ընդլայնված օգտագործումը

ՏՏԿԱՀ հարցաթերթը բավականաչափ ծավալուն է: Երկարաժամկետ կտրվածքով վարչական ռեգիստրները կարող են օգտագործվել տրամադրելու համար տեղեկատվություն հիմնական ժողովրդագրության, կրթական մակարդակի կամ եկամուտների մասին և այսպիսով նվազեցնել ռեսպոնդենտների բեռը և տվյալների հավաքագրման վրա ծախսվող գումարը:

Ավելին վարչական ռեգիստրները կարող են նվազեցնել ցածր մասնակցության տոկոսների արդյունքում ստացված շեղումը որոշակի ստրատաներում հետշերտավորման միջոցով:

6. Լրացուցիչ աջակցության կարիքների նույնականացում

Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին ներկայացվել է SPSS վիճակագրական ծրագրավորումը: Այս ուղղությամբ հմտությունների բարելավումը շարունակելու համար առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն աշատողների հետագա վերապատրաստումների հնարավորություններ որոնի վիճակագրական համակարգչային ծրագրերի գծով:
Հետազոտություններ վարելը, ինչպիսին է ՏՏԿԱՀ-ը շատ թանկ արժե: ՀՀ ԱՎԾ-ին ապագայում լրացուցիչ աջակցությունը շատ օգտակար կլինի: Երկարաժամկետ կտրվածքով համակարգչային աջակցությամբ հարցազրույցները կարող են մեծ ծախս ենթադրել և պահանջել լրացուցիչ ֆինանսական աջակցություն:

7. Չլուծված հարցեր

Երեխաների զրկվածության ցուցանիշները և նյութական զրկվածության նոր շեմերի կոնկրետ սահմանումները դեռևս որոշված չեն Եվրոստատի կողմից: Հենց որ Եվրոստատը ավարտին հասցնի առաջարկը, ՀՀ ԱՎԾ-ն պետք է կարողանա հաշվարկել նոր ցուցանիշները և պահպանել միջազգային համդրելիությունը:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք **ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15** **2017թ. հունիսի 13-16**

Բաղադրիչ 4. Աղքատության վիճակագրություն

Գործողություն 4.5. Ձեռքբերումների ստուգողական դիտարկում և առաջարկություններ ապագայի համար

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքները և չափանիշները.

Պարտադիր արդյունքներ.

- Սոցիալական բացառումների ներդրված և հաշվարկված վիճակագրություն (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Նախագծվել է հարցաթերթ սոցիալական բացառումների փորձնական հետազոտության համար (2015թ. հոկտեմբեր)
- Իրականացվել է փորձնական հետազոտություն (2015թ. դեկտեմբեր)
- Հաշվարկվել են փորձնական արդյունքները (2015թ. դեկտեմբեր)
- Ներկայացվել է երեխաների համար սոցիալական բացառումների ցուցանիշների համակարգ (2017թ. հուլիս)
- ՀՀ ԱՎԾ աշխատակազմը վերապատրաստվել է սոցիալական բացառումների վիճակագրության հարցերի գծով (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Քննարկել բաղադրիչի կարգավիճակը ծրագրի սկզբից
- Ծրագրի արդյունքների կարգավիճակի քննարկում
- Ձեռքբերումների կայունության վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում
- Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԱՎԾ հետագա աշխատանքի վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում
- Նույնականացնել չլուծված հարցերը և կարիքները, եթե այդպիսիք կան, հետագա աջակցության համար

2. Գործողության սպասվող արդյունքը

Աղքատության վիճակագրության բաղադրիչի ստուգողական դիտարկում (բաղադրիչի յուրաքանչյուր թեմայի համար).

- Բաղադրիչի կարգավիճակը ծրագրի սկզբից
- Ծրագրի արդյունքների կարգավիճակը
- Ձեռքբերումների կայունություն
- Առաջարկություններ ապագայի համար (երկարաժամկետ և կարճաժամկետ)
- Չլուծված հարցերի պարզաբանում

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Գագիկ Գևորգյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Տկն Լուսինե Մարկոսյան, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ

Այլ աշխատակիցներ

- Տկն Դիանա Մարտիրոսովա, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական
- Տկն Արմենուհի Առուշանյան, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության ՏՏ զարգացման բաժնի պետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Աիդա Բաղալյան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի առաջատար մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Արուս Գալստյան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի առաջին կարգի մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
- Տկն Լաուրա Ավետիսյան, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի երկրորդ կարգի մասնագետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

<u>ԱԵ փորձագետներ</u>

- Պրն Յարլ Քուիտզաու, փորձագետ, Դանիայի վիճակագրություն
- Պրն Վելի Մաթի Տյորմելետո, փորձագետ, Ֆինլանդիայի վիճակագրություն

<u>Գործողության մասնակից այլ շահառուներ</u>

Ներկայացուցիչներ

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից
- ՀՀ կրթության նախարարությունից
- ՀՀ առողջապահության նախարարությունից և
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամից

նույնպես կհրավիրվեն:

Հավելված 2. Առաքելության ծրագիրը

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երեքշաբթի, կեսօրից հետո *(13/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից նախորդ առաքելությունից ի վեր կատարված աշխատանքի ներկայացում
Չորեքշաբթի, առավոտ *(14/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Չլուծված հարցերի ստուգողական դիտարկում Լրացուցիչ աջակցության համար կարիքների նույնականացում
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(14/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ծրագրի արդյունքների կարգավիճակի քննարկում Քննարկում ձեռքբերումների կայունության ապահովման վերաբերյալ
Հինգշաբթի, առավոտ *(15/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում շահառուների հետ	Շահառուների հետ հանդիպում
Հինգշաբթի, կեսօրից հետո *(15/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Թվինինգ ծրագրի ավարտից հետո հետագայի քննարկում և ապագայի համար առաջարկությունների ներկայացում (կարճաժամկետ և երկարաժամկետ)
Ուրբաթ, առավոտ *(16/6)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորված հանդիպումներ	Վերջնական եզրակացությունների, առաջարկությունների և առաքելության զեկույցի նախապատրաստում
Ուրբաթ, կեսօրից հետո *(16/6)*	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների քննարկում և եզրակացությունների համաձայնեցում Ամփոփիչ հանդիպում ՇԵ ծրագրի ղեկավարի հետ և արդյունքների ներկայացում

Հավելված 3. Անձինք, ում փորձագետները հանդիպել են

ՀՀ ԱՎԾ.

- Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
- Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ
- Լուսինե Մարկոսյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ
- Աննա Ամրոյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Արուս Գալստյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Լաուրա Ավետիսյան, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
- Արմենուհի Առուշանյան, ՏՏ զարգացման բաժին
- Դիանա Մարտիրոսովա, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական
- Նելլի Մարգարյան, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Լիլիթ Կարապետյան, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Ալինա Հունանյան, վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
- Արմինե Ավետիսյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
- Նելլի Բաղդասարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Ալինա Գրիգորյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Անի Համբարձումյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
- Մարիամ Երիցյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
- Զարուհի Ավետիսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին

Արտաքին շահառուներ.

- Աննա Դագեսյան, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի սոցիալական պաշտպանության և մոնիտորինգի գնահատման բաժինների ծրագրերի օգնական

ԹՄԽ թիմ.

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Լիանա Աթոյան, ԹՄԽ օգնական
- Անուշ Պողոսյան, ծրագրի թարգմանիչ